ԿԱՐԾԻՔ

Տաթևիկ Վասակի Հակոբյանի «Սուլթան Աբդուլ Համիդ II-ի քաղաքական կերպարի արտացոլումը թուրքական պատմագրության մեջ (XX դ. II քառորդ – XXI դ. սկիզբ)» թեկնածուական ատենախոսության մասին

Հայտնի է, որ ինչպես Օսմանյան կայսրությունում, այնպես էլ դրա իրավաժառանգորդ Թուրքիայի Հանրապետությունում իրար հաջորդող վարչակարգերն, անգամ միմյանց միջև տարբեր հարցերում ունենալով լուրջ հակասություններ ու տարաձայնություններ, Հայկական հարցում եղել են միասնական և հետևողականորեն վարել են հայ ժողովրդի սեփական հայրենիքում ապրելու և ինքնակազմակերպվելու հնարավորությունը բացառող քաղաքականություն՝ հանգեցնելով ցեղասպանության և հայրենազրկման: Հայկական պետականության վերականգնումից հետո թուրքական իշխանությունները Հայաստանի նկատմամբ որդեգրել են ընդգծված թշնամական կեցվածք՝ իրենց կողմից արհեստականորեն ստեղծված Ադրբեջանի հետ համատեղ քայլեր ձեռնարկելով հայկական պետությունը վերացնելու ուղղությամբ: Համաթուրքական այդ քաղաքականության ժամանակակից դրսևորումներ են հանդիսանում 2020 թ. Արցախյան 44-օրյա պատերազմում Թուրքիայի անմիջական և ակտիվ ներգրավվածությունը, Արցախի ամբողջական շրջափակումն ու հայաթափումը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ինքնիշխան տարածքի նկատմամբ անթաքույց հավակնությունները, որոնք դրսևորվում են ինչպես հողերի ուղղակի բռնազավթումներով, այնպես էլ անօրինական սահմանազատումների միջոցով միակողմանիորեն ռազմավարական նշանակության տարածքներ զիջելու և այսպես կոչված «Զանգեզուրի միջանցք» տրամադրելու, վերջապես Արևելյան Հայաստան կամ, ինչպես պաշտոնական Բաքուն է արտահայտվում, «Արևմտյան Ադրբեջան» ադրբեջանցիների վերադառնալու պահանջներով:

Օսմանյան կայսրության և Թուրքիայի Հանրապետության հակայակական քաղաքականության գաղափարական-քարոզչական հիմքերն ապահովելու տեսակետից

թուրքական ներքաղաքական դիսկուրսում և հատկապես կառավարող վերնախավում հաստատված ավանդույթի համաձայն գաղափարախոսությունները մշտապես ասոցացվել են ինչպես քաղաքական սիմվոլիզմի, այնպես էլ պատմական կերպարների հետ: Այս առումով հատկանշական է, որ վերջին շրջանում թուրքական պատմագրության մեջ և քաղաքական շրջանակներում նկատվում են սուլթան Աբդուլ Համիդ II-ի և նախագահ Ռ. Էրդողանի միջև զուգահեռներ անցկացնելու, նրանց վարած քաղաքականության միջև ընդհանրություններ գտնելու միտումները: Անկասկած, նման զուգահեռներ անցկացնելը պայմանավորված է նաև Էրդողանի կողմից որպես Թուրքիայի արտաքին քաղաքականության հիմք հռչակված նեոօսմանականության գաղափարով, ինչն ակնհայտ սպառնալիք է Օսմանյան կայսրության նախկին տարածքներում և դրանց հարակից տարածաշրջաններում գոյություն ունեցող պետությունների ու ժողովուրդների համար: Վերընշվածից ելնելով, Տաթևիկ Հակոբյանի ատենախոսության թեման առավել քան արդիական է:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացություններից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից:

Ներածությունում հիմնավորվում է թեմայի արդիականությունը, ներկայացվում են հետազոտության նպատակը և խնդիրները, գիտական նորույթը, ինչպես նաև թեմայի ուսումնասիրվածության աստիճանը:

Առաջին գլխում՝ «Աբդուլ Համիդ II-ի հակասական քաղաքական կերպարի ձևավորումը», ատենախոսն անդրադառնում է սուլթանի կերպարի արտացոլմանը ժամանակակիցների հուշերում և XX դարի առաջին կեսի թուրքական պատմագիտական աշխատություններում:

Երկրորդ գլխում՝ «Աբդուլ Համիդ II-ի քաղաքական կերպարի վերափոխումը թուրքական պատմագրության մեջ (XX դարի 50-90-ականների սկիզբ)» քննարկվում են ինչպես XX դարի երկրորդ կեսի թուրքական պատմագրության կողմից սուլթանի կերպարի փախակերպման առաջին փորձերը, այնպես էլ նրա վարած ներքին ու արտաքին քաղաքականությանը տրված գնահատականները:

Առանձին ենթագլուխ է նվիրված թուրքական պատմագրության կողմից Հայկական հարցում Աբդուլ Համիդի վարած քաղաքականության գնահատմանը:

Երրորդ գլխում՝ «Աբդուլ Համիդ II-ի քաղաքական կերպարը XX դարավերջի – XXI դարասկզբի թուրքական պատմագրության մեջ» ներկայացվում են նշված ժամանակաշրջանում թուրքական պատմագրության կողմից սուլթանի կերպարի նոր բաղադրիչների դրսևորումները, վերջինիս հակահայկական քաղաքականության գնահատման նոր մոտեցումները, ինչպես նաև նրա և նախագահ Էրդողանի միջև տարվող զուգահեռները:

Եզրակացություններում ամփոփվել են աշխատանքի հիմնական արդյունքները:

Օգտագործելով թեմային վերաբերող աղբյուրներն ու տարբեր հետազոտողների ուսումնասիրությունները, ատենախոսը ստեղծել է կուռ և համապարփակ աշխատություն: Թուրքական աղբյուրների և գրականության հիման վրա ատենախոսին հաջողվել է բացահայտել Աբդուլ Համիդ II-ի կերպարի մեզ դեռևս անծանոթ որոշ գծեր, որոնց միջոցով ավելի ընկալելի են դառնում Հայկական հարցում վերջինիս վարած հայաջինջ քաղաքականության նախատրամադրությունները, անձնական շարժառիթներն ու մղումները: Ատենախոսը ցույց է տվել Թուրքիայում քաղաքական կոնյուկտուրայի փոփոխությունների ազդեցությունը թուրքական պատմագրության կողմից Աբդուլ Համիդի կերպարի և նրա վարած ներքին ու արտաքին քաղաքականության ընկալումների ու գնահատականների վրա: Տ. Հակոբյանի կողմից կատարվել է ինքնուրույն աշխատանք, և նրան հաջողել է հաղթահարել թեկնածուական ատենախոսության շրջանակներում իր առջև դրված խնդիրները:

Այդուհանդերձ, աշխատանքը զերծ չէ բացթողումներից ու թերություններից, ինչի վրա հրավիրում ենք ատենախոսի ուշադրությունը.

1. Թեմայի արդիականությունն ավելի հիմնավոր ներկայացնելու տեսակետից ցանկալի էր, որ Թուրքիայի նախագահ Ռ. Էրդողանի և Աբդուլ Համիդ II-ի միջև զուգահեռներ անցկացնելիս ատենախոսը փորձեր բացատրել, թե ժամանակակից թուրքական պատմագրության և պետական քարոզչության մեջ ինչո՞ւ է Էրդողանը համեմատվում Աբդուլ Համիդի, այլ ոչ թե, օրինակ, հանրապետության հիմնադիր

նախագահ Մուստաֆա Քեմալի հետ: Ինքնին հասկանալի է, որ թուրքական պատմագրությունում Աբդուլ Համիդին գովաբանելու միտումները առաջ էին եկել ի համեմատություն երիտթուրքերի կառավարման շրջանի, երբ Օսմանյան կայսրությունը ներքաշվեց Առաջին աշխարհամարտի մեջ և պարտություն կրելուց հետո փլուզվեց կրելով հսկայական տարածքային կորուստներ: Սակայն եթե սուլթանի կառավարումը համեմատելու լինենք Մուստաֆա Քեմալի իշխանության գալու շրջանի հետ, ապա անկասկած այն խամրում է թուրքական պետությունից Փոքր Ասիայի տարածքների, այդ թվում Արևմտյան Հայաստանի նահանգների անջատումը կանխելու վերջինիս ջանքերի ֆոնին: Այս տեսակետից, կարևոր և տեղին կլինեին ատենախոսի պարզաբանումներն առ այն, որ Ժողովրդահանրապետական կուսակցության հետ գաղափարական լուրջ հակադրությունների, միջկուսակցական մրցակցության ու քաղաքական բուռն պայքարի հանգամանքներից ելնելով է թուրքական քարոզչամեքենան զուգահեռներ անցկացնում ոչ թե իսկապես ուժեղ առաջնորդ համարվող Մուստաֆա Քեմալի և Ռ.Էրդողանի, այլ վերջինիս ու Աբդուլ Համիդ II-ի միջև:

2. Աշխատանքում նկատվում են թուրք հեղինակների ազդեցությամբ երբեմն նյութը պոզիտիվ շարադրելու և դրա նկատմամբ քննական մոտեցում չցուցաբերելու որոշ դրսևորումներ: Ատենախոսը փաստացի ընդունում է թուրք որոշ հեղինակների այն պնդումը, թե Աբդուլ Համիդ II-ը հանդիսացել է Օսմանյան կայսրության «վերջին ուժեղ սուլթանը» (էջ 4) կամ «երկրի տարածքային ամբողջականությունը պաշտպանող սուլթան»: Թեև առաջին հայացքից հայ բնակչության նկատմամբ սուլթանի վարած դաժան ցեղասպանական քաղաքականությունը կարող է նման տպավորություն թողնել, սակայն հայտնի է, որ Աբդուլ Համիդ II-ը ծանր պարտություն կրեց 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմում, ինչից հետո տարածքային զիջումներ կատարեց Ռուսաստանին և միայն Մեծ Բրիտանիայի դիվանագիտության ջանքերով հնարավոր եղավ վերադարձնել այդ կորուստների մի մասը, սակայն դա տեղի ունեցավ վերջինիս Կիպրոս կղզին զիջելու գնով: Անշուշտ, որոշ թուրք պատմաբաններ այս ամենին որպես հակափաստարկ նշում են, թե այդ զիջումների հաշվին սուլթանին հաջողվեց փրկել եվրոպական դիվանագիտության կողմից «հիվանդ մարդ» համարվող Օսմանյան

կայսրության ժառանգությունն իրենց մեջ բաժան-բաժան անելու հեռանկարից: Սակայն, նշվածից բացի, Աբդուլ Համիդը թույլ տվեց 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումը, ինչի հետևանքով գնաց զիջումների ստիպված վերագործարկելով 1876 թ. սահմանադրությունը, իսկ ամիսներ անց 1909 թ. սուլթանի իշխանությունը վերականգնելու ձախողված փորձից հետո նա զահընկեց արվեց և մինչև կյանքի վերջը մնաց տնային կալանքի տակ մեկուսացած՝ իր ամբողջ կարողությունները հանձնելով երիտթուրքերին: Անկասկած, համաշխարհային կամ հենց նույն Օսմանյան կայսրության պատմության մեջ իսկապես ուժեղ համարվող տիրակալները երբևէ թույլ չեն տվել իրենց հետ նման կերպ վարվել, ուստի, կարծում ենք, ատենախոսը պետք է լուրջ վերապահումով վերաբերվել թուրք որոշ պատմաբանների ու թուրքական քարոզչամեքենայի կողմից սուլթանին նման որակումներ տալուն:

3. Հարկ էր քննադատաբար վերաբերվել նաև միայն Արմադանի աշխատության մեջ հանդիպող այն դատողություններին, թե իբր Թալեաթն ու Էնվերը ափսոսանք են հայտնել Առաջին աշխարհամարտի ավարից առաջ 1918 թ. Աբդուլ Համիդի մահվան կապակցությամբ, քանի որ այլևս չէին կարող օգտվել սուլթանի կապերից ու եվրոպական դինաստիաների վրա նրա ունեցած ազդեցությունից՝ թուրքական պետության համար ավելի մեղմ պայմաններով խաղաղության պայմանագիր կնքելու առումով (էջ 35): Հարկ է նշել, որ եթե անգամ Աբդուլ Համիդը պատերազմի ավարտին ողջ լիներ, ապա Քառյակ դաշինքին պարտության մատնած Անտանտի տերությունները հազիվ թե հաշվի առնեին զահընկեց արված և տնային կալանքի տակ գտնվող սուլթանի դիմումները:

4. Կարծում ենք, ատենախոսը պետք է հակադարձեր թուրք պատմաբան Դանիշմանի այն դիտարկմանը, թե 1909 թ. մարտի 31-ի դեպքերի ժամանակ սուլթանը զահընկեց չլինելու համար հրաժարվեց արյուն թափելու գաղափարից (էջ 65): Նախ, եթե սուլթանը չէր ցանկանում արյուն թափել, ապա իր կողմնակիցներին ի սկզբանե պետք է թույլ չտար հեղաշրջման փորձ կատարել, բացի այդ, չպետք է մոռանալ, որ նրա կողմնակիցները բավարար ուժ չունեին մայրաքաղաքում իրավիճակն իրենց ձեռքը վերցնելու համար: Այս առումով, թերևս, սուլթանն իրեն հաշիվ էր տալիս, որ ուժերի

նման հարաբերակցության պայմաններում արյուն թափելը կարող էր ճակատագրական հետևանքներ ունենալ անձամբ իր և ընտանիքի համար: Ըստ ամենայնի, հենց իրավիճակը ավելի չսրելու հանգամանքով էր պայմանավորված այդ դեպքերից հետո սուլթանի և նրա ընտանիքի կյանքը խնայելու և տնային կալանքով սահմանափակվելու երիտթուրքերի որոշումը:

5. Մեջբերվում է թուրք պատմաբանի այն մոտեցումը, թե 1888 թ. «Գյուղատնտեսական բանկի» հիմնադրումով վարկեր էին տրամադրվում գյուղացիներին, ինչի հետևանքով ավելացավ վարելահողերի ծավալը (էջ 69-70): Ցանկալի կլիներ, որ այս առիթով ատենախոսը հստակ շեշտեր, որ տվյալ բանկի կողմից տրամադրվող վարկերի տոկոսադրույքները հատկապես հայ գյուղացիների համար այնքան բարձր էին, որ վերջիններս չէին կարողանում դրանք վճարել, ինչի հետևանքով որոշ ժամանակ անց նրանց հողատարածքները բռնագրավվում էին բանկի կողմից և իրենք էլ հայտնվում էին ճորտի կարգավիճակում: Այս առումով ատենախոսի համար օգտակար կլիներ անվանի պատմաբան Ազատ Համբարյանի «Ագրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում (1856–1914 թթ.)», Երևան, 1965 և «Արևմտյան Հայաստանի տնտեսությունը (1856–1914թթ.)», Արմավիր, 2003 աշխատությունների ուսումնասիրումը:

6. Ատենախոսը երբեմն ներկայացնում է տարբեր աշխատություններից մեջբերվող հակասական մոտեցումներ, սակայն չի արտահայտում սեփական վերաբերմունքը դրանց նկատմամբ և հասկանալի չի դառնում, թե ներկայացված տեսակետներից որ մեկին է նախապատվություն տալիս: Այսպես՝ Թահսին փաշայի հուշագրությունների հիման վրա կարծիք է ներկայացվում, որ սուլթան Աբդուլ Համիդը տեսական գիտելիքներ գրեթե չուներ և հավանաբար իր ժամանակի ամենաքիչ կարդացած միապետն էր, նախընտրում էր կարդալ դետեկտիվ ժանրի ստեղծագործություններ (էջ 24): Մյուս կողմից մեջբերվում են սուլթանի դստեր Այշեի հուշերը, որոնցում սուլթանը ներկայացվում է որպես բարեկիրթ, գրագետ, տարբեր երկրների սահմանադրություններ ուսումնասիրած միապետ, ով դրանցից իր երկրի համար ընտրել էր լավագույն տարբերակը (էջ 38), ինչից տպավորություն է ստեղծվում, թե Միդհատ փաշայի սահմանադրությունը սուլթանի ստեղծագործությունն էր (էջ 48): Ինչպես հայտնի է,

հուշագրություններն ընդհանրապես աչքի են ընկնում սուբյեկտիվությամբ, ինչն ընդունում է նաև ատենախոսը (էջ 50), սակայն դրանից ելնելով անհրաժեշտ էր արձանագրել, որ ինչպես Այշեն, այնպես էլ Աբդուլ Համիդի մյուս դուստրը՝ Շադիյեն իրենց գրած հուշերում ջանացել են իրենց հորն ավելի լավ լույսի ներքո ներկայացնել:

7. Անդրադառնալով թուրք պատմաբանների կողմից 1877-1878 թթ. ռուս թուրքական պատերազմի և դրա արդյունքների գնահատմանը, ատենախոսն անարձագանք է թողնում այն պնդումը, թե Կիպրոսի հանձնումը Մեծ Բրիտանիային «փոքրիկ պարգևատրություն» էր (էջ 94-95): Մինչդեռ անհրաժեշտ էր ավելի խորությամբ քննել Սան Ստեֆանոյի պայմանագրից մինչև Բեռլինի վեհաժողով ընկած ժամանակաշրջանում բրիտանական գաղտնի դիվանագիտությունը, հասկանալու համար, թե ինչի հետևանքով Աբդուլ Համիդը ոչ թե իր կամքով «պարգևատրեց» Անգլիային, այլ հարկադրված գնաց այդ զիջմանը: Այս առումով միանգամայն տեղին կլիներ, եթե հիշատակվեր բրիտանական գաղտնի դիվանագիտության արդյունքում 1878 թ. մայիսի 18/30-ին Լոնդոնում Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի միջև կնքված «Սան Ստեֆանոյի պայմանագիրը փոփոխելու մասին» համաձայնագիրը, որի 10-րդ հոդվածով Անգլիան Ռուսաստանից արդեն իսկ կորզել էր վերջինիս կողմից գրավված Բայազետն ու Ալաշկերտը թուրքերին վերադարձնելու համաձայնությունը: Դրա ստորագրումից օրեր անց՝ հունիսի 4-ին Կ.Պոլսում Մեծ Բրիտանիայի և Օսմանյան կայսրության միջև կնքվեց «Անգլիայի և Թուրքիայի միջև պաշտպանողական դաշինք»-ը, որի 1-ին հոդվածով սուլթանը համաձայնվում էր, որ Կիպրոս կղզին գրավվի և կառավարվի Անգլիայի կողմից, որպեսզի վերջինս զենքի ուժով Ռուսաստանին ստիպի վերադարձնել Սան Ստեֆանոյի պայմանագրով իրեն անցած Բայազետ քաղաքն ու Ալաշկերտի հովիտը: Օգտվելով Աբդուլ Համիդի անտեղյակությունից, Մեծ Բրիտանիան ստացավ Կիպրոսն այն բանի դիմաց, ինչի շուրջ առանց այդ էլ արդեն համաձայնության էր եկել Ռուսաստանի հետ:

8. Ատենախոսը չի հակադարձել նաև թուրք հեղինակների կողմից կայսրության հայ բնակչության անհավատարմության անհիմն մեղադրանքներին (էջ 95-96), մինչդեռ գոնե հակիրճ կարելի էր ներկայացնել հայերի իրավազուրկ և օրենքից դուրս դրված

լինելու վիճակը՝ շեշտելով, որ քրիստոնյա հպատակներից հավատարմություն պահանջելուց առաջ նախ թուրքական իշխանությունները պետք է կատարեին իրենց պարտականությունները՝ առնվազն ապահովելով օսմանահպատակ հայերի և մյուս քրիստոնյաների ամենատարրական՝ կյանքի և գույքի ապահովության երաշխավորումը. այնինչ կատարվում էր ճիշտ հակառակը:

9. Նկատվում են նաև որոշ անճշտություններ: Այսպես՝ 104 էջում Դանըշմանի աշխատությունից մեջբերվում է 1895 թ. մայիսյան բարենորոգումների ծրագրի շրջանակներում Բարձր Դռանը մայիսի 11-ին ներկայացված փաստաթուղթը, որը նշվում է որպես վերջնագիր. մինչդեռ այն անգամ բողոքի նոտա չէր, այլ ընդամենը հուշագիր, որը թուրքական կողմին ներկայացվել էր ի գիտություն: Նման ցածր կարգավիճակով դիվանագիտական այդ փաստաթղթի ներկայացումը պայմանավորված էր նրանով, որ Բեռլինի պայմանագիրը ստորագրած եվրոպական վեց տերություններից դրան միացան միայն Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան և Ռուսաստանը: Մյուս երեք տերությունների՝ Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի և Իտալիայի չմիանալը Աբդուլ Համիդին հնարավորություն տվեց մերժել ներկայացված հուշագիրը:

10. Աբդուլ Համիդի հակահայկական քաղաքականության վերաբերող 2.4 և 3.3 ենթագլուխներում ցանկալի կլիներ, որ ատենախոսը գոնե հակիրճ անդրադարձ կատարեր Արևմտյան Հայաստանում սուլթանի վարած վարչաժողովրդագրական քաղաքականությանը, երբ հայկական նահանգներին արհեստականորեն կցվում էին մահմեդականներով խիտ բնակեցված շրջաններ կամ իշխանությունների կողմից այդ նահանգներ էին ուղղորդվում մահմեդական վերաբնակիչները՝ նպատակ ունենալով այդ կերպ նվազեցնել հայերի տեսակարար կշիռը հայկական նահանգներում և խուսափել բարենորոգումներ իրականացնելու միջազգային պարտավորությունների կատարումից: Ցանկալի կլիներ նաև, որ սուլթանի կողմնակիցների 1909 թ. խռովությունը ներկայացնելիս ատենախոսն անդրադառնար նաև նույն ժամանակահատվածում դրան զուգահեռ Կիլիկիայում սանձազերծված հայերի զանգվածային կոտորածներին, որոնց պատասխանատվությունը երիտթուրքերը փորձում էին բարդել սուլթանի կողմնակիցների վրա, մինչդեռ իրականությունը ճիշտ հակառակն էր:

Արված դիտողությունները բնավ չեն նսեմացնում ատենախոսի կատարած աշխատանքը: Տաթևիկ Հակոբյանի «Սուլթան Աբդուլ Համիդ II-ի քաղաքական կերպարի արտացոլումը թուրքական պատմագրության մեջ (XX դ. II քառորդ – XXI դ. սկիզբ)» Է.00.05 «Պատմագրություն, աղբյուրագիտություն» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է թվանիշին ու մասնագիտությանը, հեղինակի հրատարակած հոդվածներն արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթները: Աշխատանքը բավարարում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս, պ.գ.դ., պրոֆեսոր Ա. Ց. Մարության

Պ.գ.դ., պրոֆեսոր Ա. Ց. Մարությանի ստորագրությունը հաստատում եմ՝

ՀՀ ԳԱԱ ՊԻ գիտքարտուղար, պ.գ.թ., դոցենտ Հ. Ղ. Մուրադյան